ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ
պարոն ԷԴՈՒԱՐԴ ՇԱՐՄԱԶԱՆՈՎԻՆ

Հարգելի պարոն Շարմազանով

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Վարդան Այվազյանի, Հովհաննես Սոֆոյանի, Արմեն Մխիթարյանի և Միքայել Մելքումյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-494-18.04.2014-ՏՀ-010/0*) վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-494-18.04.2014-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ակցիզային հարկի մասին» ՀՀ 2000 թվականի հուլիս 7-ի ՀՕ-79 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, ինչպես նաեւ սույն օրենքով սահմանված թեթեւ մարդատար ավտոմեքենաները» բառերը:

Հոդված 2 . Օրենքի 5-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի աղյուսակի 15-րդ տողը՝

8703 բացառությամբ 870310, 8703 21 101, 8703 21 901, 8703 22 101, 8703 22 901, 8703 23 199, 8703 23 909, 8703 24 101, 8703 24 901, 8703 31 101, 8703 31 901, 8703 32 191, 8703 32 901, 8703 33 191, 8703 33 901, 8703 90 10 եւ 8703 90 901-ի	25.0 մլն դրամ եւ ավելի մաքսային արժեք ունեցող կամ մինչեւ 2 տարին ներառյալ թողարկման տարեթիվ եւ 4500 սմ3 եւ ավելի շարժիչի աշխատանքային ծավալ ունեցող թեթեւ մարդատար ավտոմեքենաներ	ներմուծման դեպքում՝ մաքսային արժեք	20 տոկոս

ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության

«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ պետական բյուջե լրացուցիչ մուտքերի հավաքագրմամբ:

«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 06.12.2011թ. ընդունված օրենքի կիրառման արդյունքում զգալիորեն նվազել են «շքեղության հարկով» հարկվող ավտոմեքենաների ներկրման ծավալները եւ ՀՀ պետական բյուջե մուտքագրվող գումարների չափը: Հաշվի առնելով, որ տվյալ հարկատեսակով սահմանված մեխանիզմը չի ծառայում իր նպատակին՝ առաջարկվում է հանել թեթեւ մարդատար ավտոմեքենաների համար սահմանված ակցիզային հարկը:

Նախագծի ընդունումից հետո ակնկալվում է ներկրման ծավալների զգալի ավելացում եւ դրանով պայմանավորված՝ ՀՀ պետական բյուջե լրացուցիչ մուտքերի հավաքագրում: